Արձանագրություն 11

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 27.09.2019թ. ժամը 10:00-ին:

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Արտակ Եփրեմյան - Անվտանգության ապահովման բաժնի պետ (ԳՊ/ԳԱՊ)

**Հանձնաժողովի անդամներ՝**

Կարեն Խաչատրյան - Տնտեսական բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)

Արեգ Գևորգյան - Անվտանգության ապահովման բաժնի առաջատար մասնագետ (ԳՊ/ԳԱ)

Հայկ Գրիգորյան - Անվտանգության ապահովման բաժնի ցանցային գլխավոր ադմինիստրատոր (ԳՊ/ԲԱ)

Կարեն Բարիկյան - Անվտանգության ապահովման բաժնի ցանցային ադմինիստրատոր (ԳՊ/ԲԱ)

**Գնումները համակարգող՝**

Դավիթ Գասպարյան - Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

## Օրակարգ

### Հայտերի գնահատման նիստի մասին

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պահունի» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն) սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության հետ 01.12.2016թ. կնքված պայմանագրին կից պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման ճշգրտված տարբերակը՝ համաձայն որի պայմանագիրն ավարտվել է սահմանված ժամկետում և պայմանագրի դրույթներին համապատասխան՝ սակայն վերոնշյալ պայմանագրի գումարը չի բավարարում «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությամբ սահմանված պահանջներին (բոլոր երեք չափաբաժինների մասով առանձին-առանձին ևս չի բավարարում), ինչպես իսկ Ընկերության կողմից ներկայացված գրությունը այն մասին, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության հետ 01.06.2015թ. կնքված պայմանագիրը, որը կրում է շարունակական բնույթ, ընդունել որպես համանման, ինչը նույնպես չի համապատասխանում հրավերի պահանջների, քանի որ պայմանագիրը կնքվել է երեք տարուց ավելի շուտ և ամբողջ ծավալով ավարտված չէ, ուստի գնահատող հանձնաժողովը «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն ***որոշեց.***

1.1 «Պահունի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բոլոր երեք չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:

1.2 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած «Գարդիան» ՍՊԸ-ին:

1.3 Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել և «Գարդիան» ՍՊԸ-ից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող

փաստաթղթեր) և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

1.4 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն արձանագրության 1.3 կետում նշված փաստաթղթերը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան սույն թվականի հոկտեմբերի 7-ին ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Եփրեմյան

Հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Խաչատրյան

Արեգ Գևորգյան

Հայկ Գրիգորյան

Կարեն Բարիկյան

Գնումները համակարգող՝ Դավիթ Գասպարյան